

## Տ. ԱՐԾԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆ

**(Տիգրան սարկավագ)**

*Ծնվել է 1974 թ. մարտի 19-ին, Վրաստանի Հանրապետության Նինոծմինդայի (Բոգդանովկա) շրջանի Սաթխա գյուղում:*

*1979 թ. ընդունվել է տեղի միջնակարգ դպրոց:*

*1989 թ. տեղափոխվել է ՀՀ Նաիրիի շրջանի Բուժական գյուղ:*

*1990 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:*

*Նույն թվականին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:*

*1996 թ. մայիսի 19-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գեր. Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:*

*Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր Ճեմարանի վեցամյա դասընթացը:*

*1996-97 թթ. աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես քարտուղար:*

*1997 թ. հոկտեմբերի 30-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ Եկեղեցու գույքի և կալքի բռնագրավումները Հայաստանում 1920-1925 թթ.» վերտառությամբ, և ստացել քաջալավ գնահատական:*

*1997 թ. դեկտեմբերի 14-ին, ձեռամբ Եգիպտոսի հայոց թեմի Առաջնորդ Գեր. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել և օծվել է կուսակրոն քահանա:*